ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐ

ՀՐԱՄԱՆ

No 2045-Ա/2 «03» հոկտեմբերի, 2023 թ.

ԳԻՏԱԿԱՆ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄՆԵՐԻ ՆՅՈՒԹԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲԱԶԱՅԻ ԱՐԴԻԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄՐՑՈՒՅԹԻ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության վարչապետի 2019 թվականի հունիսի 1-ի N 661-Լ որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության կանոնադրության 19-րդ կետի 20-րդ ենթակետը՝

Հ Ր Ա Մ Ա Յ Ո Ւ Մ Ե Մ

1. Հաստատել գիտական ստորաբաժանումների նյութատեխնիկական բազայի արդիականացման համար ֆինանսական աջակցություն տրամադրելու մրցույթի կարգը՝ համաձայն հավելվածի:

2. Սույն հրամանի կատարման հսկողությունը հանձնարարել Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի նախագահ Սարգիս Հայոցյանին:

ՆԱԽԱՐԱՐ՝ **Ժ. ԱՆԴՐԵԱՍՅԱՆ**

Հավելված
ՀՀ ԿԳՄՍ նախարարի
«03» հոկտեմբերի, 2023 թ.
N 2045-Ա/2 հրամանի

Կ Ա Ր Գ

ԳԻՏԱԿԱՆ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄՆԵՐԻ ՆՅՈՒԹԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲԱԶԱՅԻ ԱՐԴԻԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄՐՑՈՒՅԹԻ

Սույն կարգով սահմանվում է Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից գիտական և գիտատեխնիկական գործունեության բազային ֆինանսավորման ծրագրում ընդգրկված գիտական պետական կազմակերպությունների կամ բուհերի (այսուհետ՝ Կազմակերպություն) գիտական ստորաբաժանումների նյութատեխնիկական բազայի արդիականացման համար ֆինանսական աջակցություն տրամադրելու մրցույթի կարգը:

1. Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության բարձրագույն կրթության և գիտության կոմիտեն (այսուհետ՝ Կոմիտե), սույն կարգի պահանջներին համապատասխան, կազմակերպում է Կազմակերպությունների գիտական ստորաբաժանումների նյութատեխնիկական բազայի արդիականացման համար գիտական սարքերի/սարքավորումների ձեռք բերմանն աջակցություն տրամադրելու հայտերի (այսուհետ՝ Հայտ) ընտրության մրցույթ (այսուհետ՝ Մրցույթ):

2. Մրցույթի մասին հայտարարությունը հրապարակվում է Կոմիտեի պաշտոնական կայքում:

3. Կազմակերպությունը յուրաքանչյուր գիտական ստորաբաժանման նյութատեխնիկական բազայի արդիականացման համար Կոմիտե է ներկայացնում առանձին Հայտ՝ համաձայն սույն կարգի հավելվածի:

4. Հայտի տպագիր տարբերակը Կոմիտե է ներկայացվում Կազմակերպության ղեկավարի պաշտոնական գրությամբ, որտեղ նշվում է գիտական ստորաբաժանման՝ տվյալ սարքով/սարքավորումով վերազինման անհրաժեշտությունը և Կազմակերպության հետագա զարգացման համար դրա կարևորությունը: Հայտի էլեկտրոնային տարբերակը ներկայացվում է նիշքի Microsoft Word Document (.docx) տեսակով՝ Կոմիտեի support@hesc.am էլեկտրոնային հասցեին:

5. Մեկից ավել Հայտերի դեպքում Կազմակերպությունը ներկայացնում է Հայտերի վարկանիշային ցանկ՝ ըստ Կազմակերպության (բուհերի դեպքում ըստ յուրաքանչյուր բազային ծրագրի) առաջնահերթությունների:

6. Կազմակերպության միևնույն գիտական ստորաբաժանման վերազինման նպատակով կարող է ներկայացվել Մրցույթի մասնակցության միայն մեկ Հայտ:

7. Հայտով ներկայացվում է սարքի/սարքավորման գնումն ապահովելու համար անհրաժեշտ գումարը (սարքի/սարքավորման գին, ԱԱՀ, տեղափոխում և այլն):

8. Հայտերը գնահատելու համար ստեղծվում է մրցութային (գնահատող) հանձնաժողով (այսուհետ՝ Հանձնաժողով):

9. Հանձնաժողովը գործունեությունն իրականացնում է նիստերի միջոցով:

10. Հանձնաժողովը հաստատում է Հայտի գնահատման թերթիկը:

11. Հանձնաժողովը կարող է ներկայացնել Հայտերի քննարկման առաջնահերթության վերաբերյալ առաջարկություն:

12. Հանձնաժողովը գնահատում է Կազմակերպության գիտական ստորաբաժանման գիտական և գիտատեխնիկական գործունեության համար սարքի/սարքավորման անհրաժեշտությունը, ակնկալվող արդյունքների քանակական և որակական ցուցանիշները, գիտական ստորաբաժանման աշխատակիցների, այդ թվում՝ սարքի/սարքավորման հետ աշխատող կամ վերապատրաստված մասնագետների ունեցած գիտական արդյունքները, ինչպես նաև Մրցույթի առանձնահատկությունից բխող այլ հարցեր:

13. Կոմիտեն Հանձնաժողովին տրամադրում է https://orgs.hesc.am/ առցանց համակարգից Կազմակերպության գիտական ստորաբաժանման աշխատակիցների վերաբերյալ համապատասխան տեղեկությունները:

14. Հայտերի գնահատականների նվազման կարգով ձևավորում է վարկանիշային ցանկ:

15. Հանձնաժողովը, գնահատման արդյունքների հիման վրա, տալիս է սարքի/սարքավորման ձեռք բերմանն աջակցություն տրամադրելու նպատակահարմարության վերաբերյալ եզրակացություն:

16. Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարը, ելնելով տվյալ տարվա Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից համապատասխան միջոցառման իրականացման համար նախատեսված

հատկացումների չափից, հաստատում է Մրցույթի արդյունքները (ֆինանսական աջակցության երաշխավորված սարքերի/սարքավորումների ցանկը):

17. Կազմակերպությունը Կոմիտեի հետ կնքում է ֆինանսական աջակցություն տրամադրելու պայմանագիր:

18. Սարքերը/սարքավորումները ձեռք են բերվում «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով՝ պետության կարիքների համար կատարվող գնումների կանոններին համապատասխան: Գնված սարքերի/սարքավորումների տնօրինման իրավունքը պատկանում է Կազմակերպությանը՝ կանոնադրական նպատակներով օգտագործելու (գիտական և գիտահետազոտական աշխատանքներ իրականացնելու) համար:

19. Գիտական սարքի/սարքավորման տեղակայումից հետո 12 ամիսը լրանալուց հետո Կազմակերպությունը Կոմիտե է ներկայացնում ամփոփիչ հաշվետվություն (այսուհետ՝ Հաշվետվություն):

20. Հաշվետվությամբ ներկայացվում են տեղեկություններ սարքի/սարքավորման շահագործմամբ իրականացված աշխատանքների ծավալի, բնույթի, ստացված արդյունքների (հրապարակումներ, գիտաժողովներ, նորարարական կարողության կիրառություն, մտավոր սեփականության տնօրինում և այլն) վերաբերյալ:

21. Հաշվետվության հիման վրա Հանձնաժողովը տալիս է համապատասխան եզրակացություն:

22. Հաշվետվություն չներկայացնելու կամ վերջինիս վերաբերյալ Հանձնաժողովի բացասական եզրակացության դեպքում Կոմիտեն կարող է քննարկել սարքի/սարքավորման տեղակայման վայրի փոփոխության հարցը:

Հավելված

Գիտական ստորաբաժանումների նյութատեխնիկական բազայի արդիականացման համար գիտական սարքերի/սարքավորումների գնման հայտերի ընտրության մրցույթի կարգի

ՀԱՅՏ

ԳԻՏԱԿԱՆ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄՆԵՐԻ ՆՅՈՒԹԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲԱԶԱՅԻ ԱՐԴԻԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄՐՑՈՒՅԹԻ

Հայտը հանձնված է «_____» _____ 20.. թ. Ծածկագիր՝ _____

(*լրացվում է Կոմիտեում*)

ՏԻՏՂՈՍԱԹԵՐԹ

1. Կազմակերպության

- անվանում (լրիվ)

2. Կազմակերպության գիտական ստորաբաժանման

- անվանում (լրիվ)
- ղեկավարի անուն, ազգանուն (լրիվ)
- հեռախոսահամար

3. Սարքի/սարքավորման

- անվանում
- գիտության բնագավառ(ներ)
- գին[1]

4. Կոմիտեից հայցվող ընդհանուր գումար (ՀՀ դրամ)

5. Սարքի/սարքավորման շահագործման պատասխանատու անձի

- անուն, ազգանուն (լրիվ)
- պաշտոն
- հեռախոսահամար
- էլեկտրոնային փոստի հասցե

6. Համաֆինասավորող կազմակերպության[2]

- անվանում (լրիվ)
- հասցե
- հեռախոս
- էլեկտրոնային փոստի հասցե
- ղեկավարի (տնօրեն/ռեկտոր) անուն, ազգանուն (լրիվ)

---

[1] *Ներառում է բոլոր ծախսերը (սարքի/սարքավորման գին, ԱԱՀ, փոխադրում և այլն):*

[2] *Լրացվում է, եթե կա համաֆինանսավորող:*

Կազմակերպության ղեկավարի ստորագրություն _____

Կ.Տ

«____» _____ 20 թ.

ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ
ՍԱՐՔԻ/ՍԱՐՔԱՎՈՐՄԱՆ ՀԵՏ ԱՇԽԱՏԱՆՔԻ
ՓՈՐՁ ՈՒՆԵՑՈՂ ԿԱՄ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՎՈՂ ՄԱՍՆԱԳԵՏՆԵՐԻ ՄԱՍԻՆ

ներգրավված մասնագետներ				
ազգանունը, անունը, հայրանունը	պաշտոնը	գիտական աստիճանը	աշխատանքային փորձը	
			ընդհանուր ժամանակահատվածը	գործունեության ոլորտը և կատարած աշխատանքը / վերապատրաստող կազմակերպությունը (գործունեության ոլորտը)
1	*2*	*3*	*4*	*5*

ՍԱՐՔԻ/ՍԱՐՔԱՎՈՐՄԱՆ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ

անվանումը	տեխնիկական բնութագիրը

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ[3]

1. Գիտական ստորաբաժանման գիտական ուղղությունների արդի վիճակի ամփոփ վերլուծություն

2. Գիտական ստորաբաժանման գիտական նպատակները և խնդիրները

3. Գիտական ստորաբաժանման վերազինման, գիտական և գիտատեխնիկական գործունեության համար սարքի/սարքավորման անհրաժեշտության հիմնավորումը

4. Գիտական ստորաբաժանման աշխատակիցների, այդ թվում՝ սարքի/սարքավորման հետ աշխատող կամ վերապատրաստված մասնագետների ունեցած գիտական արդյունքները

5. Համաֆինանսավորող կազմակերպության համաֆինանսավորման չափը

6. Տարեկան օրացուցային պլան

7. Ակնկալվող արդյունքների քանակական և որակական ցուցանիշները *(հրապարակումներ, գիտաժողովներ, նորարարական կարողության կիրառություն (տեխնոլոգիական ներդրում, ցուցադրում, փորձնական նմուշ, նախատիպ և այլն), մտավոր սեփականության տնօրինում (արտոնագիր, հեղինակային իրավունք և այլն))*

8. Գիտական ստորաբաժանման զարգացման հեռանկարները *(ռիսկեր և հնարավորություններ)*

9. Այլ նշումներ

[3] *Մինչև 8 էջ:*